

Որակի հռչակագիր Ճանապարհային տրանսպորտ

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ճանապարհային տրանսպորտ
0.2	Ոլորտը	Տրանսպորտ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին Բաժնի պետ Անահիտ Ներսիսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 582949 Էլ. փոստ՝ anahit_nersisyan@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի (բեռնափոխադրում, բեռնաշրջանառություն, ուղևորափոխադրում, ուղևորաշրջանառություն, ավտոմոբիլային տրանսպորտի կատարած վազքեր, տրանսպորտային ծառայություններից ստացված հասույթների (առանց ավելացված արժեքի հարկի)) վերաբերյալ՝ Օժանդակ և լրացուցիչ ավտոտրանսպորտային գործունեությունից ստացված հասույթը (առանց ավելացված արժեքի հարկի) ներառում է հետևյալ տեսակի ավտոտրանսպորտային գործունեությունից ստացված հասույթները.</p> <ol style="list-style-type: none"> 1. Բեռների բեռնման և բեռնաթափման 2. Բեռների պահման և պահեստավորման 3. Ավտոկայարանների և ավտոկայանների 4. Մաքսային միջնորդային 5. Երթակարգավարական 6. Մաքսային տերմինալների 7. Այլ ծառայություններ՝ բաց կամ փակ տարածքում ավտոհանգրվանների, ավտոտնակների շահագործումից, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների, մոտոցիկլետների, հեծանիվների կայանատեղերի սպասարկման վճարներից, ավտոմայրուղիների ընդհանուր օգտագործման նշանակության ավտոճանապարհների, մայթերի, կամուրջների և թունելների շահագործումից, բեռների փոխադրմանը վերաբերող տրանսպորտային գործակալների միջնորդական ծառայություններից և այլն: <p>Ցուցանիշների հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 30-ական թվականներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին</p>

		համադրելիությունն ապահովելու նկատառումներով:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի ցուցանիշները կիրառվում են տրանսպորտի բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ամսական, և տարեկան պարբերականությամբ հավաքվող տվյալներն են:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	Տրանսպորտն ընդգրկում է ընդհանուր և ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտի տեսակները: Ընդհանուր օգտագործման տրանսպորտն իրականացնում է տնտեսության ճյուղերի և բնակչության բեռների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման երթուղիներով ուղևորների փոխադրումները: Ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտն իրականացնում է տվյալ կազմակերպության բեռների փոխադրումները ավտոտրանսպորտային միջոցներով, ինչպես նաև ավտոտրանսպորտով տվյալ կազմակերպության աշխատողների փոխադրումները (ներտնտեսական և ծառայողական): Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի հիմնական ցուցանիշներն են բեռների փոխադրումների ծավալը (տոննա), բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետր), ուղևորների փոխադրումների ծավալը (ուղևոր) և ուղևորաշրջանառությունը

		<p>(ուղևոր- կիլոմետր): Ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրման և ուղևորաշրջանառության ծավալները որոշվում են ըստ հաղորդակցության առանձին տեսակների՝ ներքհամայնքային, ներմարզային, միջմարզային և միջպետական:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><i>Հիմնական հասկացություններ</i></p> <p>Բեռնափոխադրումների ծավալում (փոխադրված բեռներ) ներառվում է փոխադրված բեռների փաստացի քանակը, հաշվի առած տարայի կամ բեռնարկղի (կոնտեյների) քաշը:</p> <p>Բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետրերով) հաշվարկվում է փոխադրվող բեռների յուրաքանչյուր խմբի քաշի (տոննա) և այդ բեռնափոխադրման հեռավորության արտադրյալների հանրագումարով:</p> <p>Ուղևորափոխադրումների ծավալում (փոխադրված ուղևորներ) ներառվում է տրանսպորտային միջոցներով փաստացի փոխադրված ուղևորների թվաքանակը (ներառյալ անվճար երթևեկության իրավունքներից օգտվող ուղևորները):</p> <p>Ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետրերով) հաշվարկվում է փոխադրված ուղևորների թվաքանակի և մեկ ուղևորի փոխադրման միջին հեռավորության արտադրյալների հանրագումարով:</p> <p>Ավտոմոբիլային տրանսպորտի կատարած վազքեր ցուցանիշը որոշվում է բոլոր ավտոմեքենաների բեռով, (ուղևորով) դատարկ և զրոյական վազքերի գումարով:</p> <p>Ավտոմեքենաների շահագործումից ստացված հասույթ ցուցանիշը ներկայացնում է ավտոմեքենաների շահագործումից ստացված ընդհանուր հասույթը և հաշվարկվում է առանց ավելացված արժեքի հարկի: Այս ցուցանիշը հաշվառվում է բոլոր ռեսպոնդենտների կողմից, որոնց ավտոտրանսպորտը շահագործվել է առևտրային հիմունքներով (այսինքն՝ վճարովի):</p> <p>Բեռնափոխադրումներից ստացված հասույթ (առանց ավելացված արժեքի հարկի) ցուցանիշն իրենից ներկայացնում է բեռնատար ավտոմեքենաների շահագործումից ստացված ընդհանուր հասույթը: Բեռնափոխադրումներից ստացված հասույթի մեջ չեն ներառվում բեռման-բեռնաթափման աշխատանքներից, առևտրային և առաքիչ գործառնություններից, պահեստների շահագործումից և բեռնափոխադրումների հետ կապված այլ ծառայություններից ստացված հասույթները:</p> <p>Շահագործական ավտոբուսների և միկրոավտոբուսների հասույթը (առանց ավելացված արժեքի հարկի) ցույց է տրվում երթուղային ավտոբուսների, միկրոավտոբուսների և պատվերով աշխատող ավտոբուսների շահագործումից ստացված հասույթները:</p>

		<p>Թեթև մարդատար տաքսիներից ստացված հասույթի (առանց ավելացված արժեքի հարկի) մեջ ներառվում են դրանց շահագործումից ստացված բոլոր տեսակի վճարումները, ներառյալ այն հասույթը, որը ստացվում է պատվիրատուի կողմից ծառայողական նպատակներով կազմակերպության թեթև մարդատար ավտոմեքենաների շահագործման դիմաց:</p> <p>Օժանդակ և լրացուցիչ ավտոտրանսպորտային գործունեությունից ստացված հասույթը (առանց ավելացված արժեքի հարկի) ներառում է հետևյալ տեսակի ավտոտրանսպորտային գործունեությունից ստացված հասույթները.</p> <ol style="list-style-type: none"> 1. Բեռների բեռնման և բեռնաթափման 2. Բեռների պահման և պահեստավորման 3. Ավտոկայարանների և ավտոկայանների 4. Այլ ծառայություններ՝ բաց կամ փակ տարածքում ավտոհանգրվանների, ավտոտնակների շահագործումից, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների, մոտոցիկլետների, հեծանիվների կայանատեղերի սպասարկման վճարներից, ավտոմայրուղիների ընդհանուր օգտագործման նշանակության ավտոճանապարհների, մայրերի, կամուրջների և թունելների շահագործումից, բեռների փոխադրմանը վերաբերող տրանսպորտային գործակալների միջնորդական ծառայություններից և այլն: <p><i>Ճյուղային ընդգրկունություն</i></p> <p>Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի վիճակագրական դիտարկումները ներառում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2) փոխադրումներ և պահեստային տնտեսություն բաժին H- ը, որտեղ ներառված են ավտոճանապարհային բոլոր փոխադրումները՝ անտառանյութի, սառեցրած կենդանիների, ծանրաքարշ, կիտվածքով բեռների, ներառյալ ցիստեռններով փոխադրումներն, այդ թվում՝ գյուղացիական տնտեսություններում հավաքված կաթի փոխադրումը, ավտոմոբիլների, աղբի և այլ տարբեր թափոնների (բացառությամբ հավաքման և վերամշակման ծառայությունները), ներառվում է նաև բեռնատար մեքենաների հանձնումը վարձակալության վարորդով:</p> <p>Այս խմբում չեն ներառվում անտառի տարածքով անտառանյութի փոխադրումը, որը անտառամթերման աշխատանքների մաս է կազմում, փոստային և սուրհանդակային գործունեությունը, աղբի և տարբեր թափոնների փոխադրումը, եթե այդ ծառայությունը աղբահավաքման և վերամշակման գործունեության մաս է կազմում:</p>
--	--	--

		<p>Այս խմբում ներառվում է նաև ցամաքային ավտոտրանսպորտային միջոցներով իրականացվող ներքհամայնքային, ներմարզային, միջմարզային և միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումներ հաստատված երթուղիներով և ժամանակացույցի համաձայն, ուղևորներին նստեցնելով և իջեցնելով նախատեսված կանգառներում, ներառվում է նաև անձնական մարդատար մեքենաների (տաքսի ծառայություններ) հանձնումը վարձակալության վարորդով:</p> <p>Խումբը բացառում է շտապ օգնության մեքենաներով հիվանդների փոխադրումը:</p> <p><i>Աշխարհագրական ընդգրկունություն</i></p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և Երևան քաղաքը:</p> <p><i>Հրապարակման խմբավորումներ</i></p> <p>Տվյալները հրապարակվում են ըստ հաղորդակցության տեսակների:</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական, տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Ամսական յուրաժամանակ (օպերատիվ) տվյալները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը, իսկ տարեկան ցուցանիշները՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 4-րդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Ամսական, տարեկան
3. Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Տվյալները հավաքվում են համատարած կարգով այն իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից, որոնք իրականացնում են ցամաքային տրանսպորտի գործունեություն՝ թվով 650 միավոր: Այլ ոլորտներում գործունեություն ծավալող տրանսպորտային միջոցներ ունեցող կազմակերպությունները տեղեկություն են տրամադրում ընտրանքային դիտարկման միջոցով: Գլխավոր համակցության ձևավորման նպատակով կիրառվում է վիճակագրական բիզնես ռեգիստրը: Ընտրանքը ստրատիֆիկացված է ըստ գործունեության տեսակների և աշխատողների թվաքանակով որոշվող չափերի: Առկա ռեսուրսներից էլնելով՝ ընտրանքի չափը կազմում է 30-35% և ներառում 2200 միավոր:
3.2	Անճշտության	Դիտարկման ընթացքում առաջացող անճշտությունների աղբյուր

	աղբյուրները	կարող են հանդիսանալ ընտրանքի սխալը, տեղեկություն տրամադրողների կողմից պատասխանների բացակայությունը, բիզնես ռեզիստորում առկա տեղեկատվության անճշտությունները (գործունեության տեսակի ոչ ճիշտ որոշումը կամ դրա փոփոխությունը տարվա ընթացքում) և այլն: Մահմանված ժամկետում վիճակագրական տվյալների չներկայացման դեպքում կրկնվում են նախորդ ժամանակաշրջանի տվյալները:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ընտրանքի չափը չի գերազանցում 5%: Պատասխանների մակարդակը 97% է:
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ.-ը ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998- 2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄԱԿ): Սկսած 2002թ.-ից ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված Եվրոպական համայնքների վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE, հիման վրա): 2010թ.-ից կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա է համադրելիությունն այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության (օրինակ՝ կազմակերպությունների տնտեսական գործունեության հետազոտության) հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Առաջին անգամ հրապարակված տվյալներն որակվում են նախնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով: Նախնական տվյալները վերանայվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:
5 .Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	Ամսական հրապարակումներ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տվյալները հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն) Տարեկան հրապարակումներ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն): «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և

		<p>անգլերեն):</p> <p>Տվյալների բազաներ</p> <p>http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Ինտերնետային հասցե</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82:</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	<p>Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են</p> <p>Իրավաբանական անձանց համար. ա/ իրավաբանական անձի ծածկագիրը բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը, ե/ կազմակերպական-իրավական ձևը, զ/ իրավաբանական անձի գործունեության իրականացման վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով էլեկտրոնային փոստի հասցեն, է/ իրականացված շինարարության ծավալը (առանց ավելացված արժեքի և այլ անուղղակի հարկերի), Անհատ ձեռնարկատերերի համար. ա/ անունը, ազգանունը, բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/անհատ ձեռնարկատերերի գործունեության իրականացման վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով էլեկտրոնային փոստի հասցեն, ե/ իրականացված շինարարության ծավալը (առանց ավելացված արժեքի և այլ անուղղակի հարկերի)</p>
5.3	Այլ տեղեկատվություն	<p>Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:</p>
5.4	Այլ տեղեկատվություն	<p>Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի հիմնական ցուցանիշների հաշվարկման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը զետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ. նոյեմբերի 12-ի թիվ 62-Ն «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի և շարժակազմի մասին» Ձև 1-ավտո (ամսական), 2018 թ. նոյեմբերի 12-ի թիվ 65-Ն «Ավտոմոբիլային</p>

		<p>տրանսպորտի աշխատանքի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարության մասին» Ձև 1-տրանսպորտ (տարեկան), 2018 թ. նոյեմբերի 12-ի թիվ 66-Ն «Ավտոմոբիլային տրանսպորտի գործունեության մասին» (տարեկան) ձև 3-ավտո հաշվետվությունների ձևերը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» հաստատված հավելված 2-ում:</p> <p>Մեթոդաբանական պարզաբանումներ են առկա նաև «Հայաստանի վիճակագրական տարեգրքում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում:</p>
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: